

# ՕՐԱԳԻՐ

40 ՓՐՅ.



40 ՓՐՅ.

ՎԵՂԵՔԱՎԱՆՆ ԱՉՔԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՆՏԻՔԱՆՆ

ԵՏԱՐԻ 1290 ԲԱՄԱՁԱՆ 11

ՇԱՐԱԹ 20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1873

Ն. Տ. ՆՈՅՆՄԱՐԻ 1 ԹԻԻ 1069

## Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ

ԵՒ

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԽԱՐԷՆՈՒԹԻՒՆԸ

Ս. Պատրիարքը հրատարեցաւ զնայ ըայց իր հրատարման անանկ խարէական պատճառ մը դնել տուին, որ թէ չուղղուի՝ ապագային համար շատ վնասակար կրնայ ըլլալ:

Ս. Պատրիարքը հրատարեցաւ պատճառը՝ Սահմանադրութեան անգործարելի ըլլալն է, քսաւ:

Օտեան և Երևանի Եփէնտիք իրաւունք տուին անոր:

Պատրիարքը՝ զնաց, ըայց այդ էփէնտիք մնացին:

Ապագայ դժուարութեանց առաջը առնելու համար, այս խնդիրը պէտք է ստեղծուի:

Ս. Պատրիարքը՝ պատրիարք եղած օրէն, այսինքն 1869 ի վերջերէն, մինչև 1872 ի կէսը, այսինքն երեք տարուան միջոց, կըսէր աղբին՝ թէ «սահմանադրութիւնը գործարելի է, հարկ չկայ անոր վերաքննութեան փութացման, և իրօք ալ, ստիպողական անունով միշտ զանազան խնդիրներ յառաջ քշելով, միշտ պատճառ կըլլար վերաքննութեան յետաձգութեան. այն երեք տարուան միջոցին մէջ, կըսեմք, յորում Երևանի Եփէնտի ատենադպիր էր Բաղ. Ժողովոյ:

1872 ի կեսէն ետև, յորում Բաղ. Ժողովը փոխուելով, փոփաղեան էփէնտի Բաղ. Ժողովոյ ատենադպիր եղաւ, անմիջապէս Ս. Պատրիարքը աղաղակել սկսաւ թէ «Սահմանադրութիւնը անգործարելի է, հարկ է անոր վերաքննութիւնը փութացնել, սանկ ընել, նանկ ընել» և այլն, վերջապէս գործը հոն բերաւ որ այսօր հրատարեցաւ և իր հրատարման պատճառն ալ վերաքննութեան ոչ փութացումը կը դնէ, տես

իր զանազան ձևերու տակ հրատարակած կիսգէն աւելի հրատարականներուն մէջ:

Եթէ գործը իրօք ու ճիշդ մեր պատմածին պէս է, այսինքն Ս. Պատրիարքը՝ նախորդ Բաղ. Ժողովոյ երէք քարէ պաշտօնավարութեան միջոցին մէջ, սահմանադրութիւնը գործարելի է կըսէր, և ներկայ Բաղ. Ժողովոյ մի կէս տարուան պաշտօնավարութեան միջոցին մէջ, մանաւանդ թէ առաջին օրէն է, որ սահմանադրութեանը անգործարելի է բռնել սկսաւ, և վերջապէս անոր վերաքննութեան ոչ փութացումը պատճառ բռնելով հրատարեցաւ, Ս. Պատրիարքին ըրածը պարզապէս՝ ըացարձակապէս և անարդարանալի դիւանագիտութիւն մըն է:

Եւ արդարև Ս. Պատրիարքը իր հրատարականներէն մէկուն մէջ կը դանդաղ թէ «ներկայ Բաղ. Ժողովոյ ատենադպիր փոփաղեան էփէնտի ներկայ Բաղ. Ժողովոյ կազմութեան առաջին օրը իր դիւանի սեղանին վրայ սահմանադրութիւնը դնելով յայտարարութիւն ըրաւ թէ՝ «վարչութիւն և նախագահ ասոր տրամադրութեանցն համեմատ պարտաւոր ենք վարուիլ»:

Ս. Պատրիարքի այս գանգատէն կը հասկըցուի թէ նախորդ Բաղ. Ժողովոյ ատենադպիր Երևանի Եփէնտի առ Ն. Սրբազնութիւնը ըրած յայտարարութիւնը ասոր հակառակն է եղեր, նա՝ «հակասահմանադրանական», այսինքն սահմանադրութեան տրամադրութեանց հակառակ վարուիլ է յայտարարեր, անոր՝ պաշտօնավարութեան սկսած օրը առ աղբն ըրած սա յայտարարութիւնը թէ՝ «ինքզինքը երեսփ. ընդհ. Ժողովին պատասխանատու կը ճանչէ, ուստի պիտի աշխատի մինչև ի վերաքննութիւն գործարել և յարգել տալ բոլոր աղագայնոց արդի սահմանադրութիւնը», սուտ է եղեր:

Ուրեմն, կըսեմք, Երևանի Եփէնտի և Ս. Պատրիարքը խորհրդակցութեամբ հրապարակական և դատա-

պարտելի խարէութիւն մընեն կատարեր, խօսք մէկ ընելով մշտնջենն, թէ «Մէկ կողմէն Սահմանադրութիւն ունինք և զայն պիտի գործադրենք կըսենք Աղբին, և միւս կողմէն չգործադրելով զայն՝ չկայ կընենք, և մեր պաշտօնավարութեան՝ սահմանադրութեան վերաքննութեան աւարտումը պայման դնելով, և վերաքննութեան գործը յանձնուս երկարելով, երկար ժամանակ պաշտօնի մէջ կը մնանք, և այդ միջոցին մէջ, քանի առիթը ներկայանայ՝ Սահմանադրութեան յորուածոց դէմ շարունակ զեղծումներ գործելով, օրին մէկը զայն բողոքովն յեղծեալ, ուստի և չկայ հրատարակելու կարող կըլլամք» և այլն:

Եթէ աս սասնկ չէ, ուրեմն ինչ է, որ Ս. Պատրիարքը նախորդ Բաղ. Ժողովի օրովը երեք տարի շարունակ «Սահմանադրութիւնը գործադրելի է» ըսելէ ետև, ներկայ Բաղ. Ժողովոյ ընտրուած օրը, «սահմանադրութիւնը անգործարելի է» ըսել կըսկսի, և և միմիայն գրեթէ այդ խնդրոյն համար շարունակ արդի Բաղ. Ժողովոյ հետ մէկ ու կէս տարի շարունակ կուռելէ ետև, վերջապէս կը հրատարի, և կամ ճիշդն ըսենք, ինքզինքը իր գործած ծանր ծանր յանցանաց պատասխանատուութենէն ազատելով խոյս տալու համար, վերաքննութիւնը իր հրատարականին պատրուակ կընէ:

Բայց մեք, մեր այս ըսածները յանիրաւի և առանց ապացոյցի ըսած չըլլալու համար, հաստատող ապացոյցներ մէջ բերենք:

1871 Յունվար 29, Ատենադրութիւն Երեսփ. Ժողովոյ նիստ ժէ.

«Ապրօ էփէնտի՝ Ատենապետ Բաղ. Ժողովոյ: — Սահմանադրութիւնը անգործարելի է ըսողները կը տեսնեն որ այսօր գործարելի է մէջ կը գտնուի, հետեւաբար պէտք է անոր վրայ սըրբազրութիւն ըլլայ: Մանաւանդ Սահմանադրութեան վերաքննութեան վերջին յորուածին տրամադրութեան հա-



«մեծատ» չէ թէ ամբողջ սահմանադրութիւնը մէկ կողմ դրուելով նոր «ծրագիր մը պիտի շինուի, այլ միայն «այն պրահարտ-ի-ն-ն-է-ը պիտի սրբագրուին երբ անոնց փոփոխութիւնը փորձառութեամբ հարկաւոր դասուի» :

Ս. Պատրիարքի պաշտօնավարութեան առաջին երեք տարիներուն քաղ, ժողովին Ատենապետ վսեմ. Ապրօ Էֆէնտի սոյն յայտարարութիւնը խիստ պարզ է և նշանուոր, մանաւանդ անոր համար որ նոյն ժամանակի գործադիր իշխանութեան կողմէն կը խօսի, և բացարձակապէս կը յայտարարէ, թէ «սահմանադրութիւնը գործադրելի է և գործադրութեան մէջ, և առանց փորձառութեամբ հարկ տեսնելով անոր այս կամ այն տրամադրութիւնը «երեսփ. ժողովին սրբագրել տալու, մարդ իրաւունք չունի շեղելու անկէ» :

Նոյն ժամանակ, նոյն ժողովոյ նոյն նիստ.

Նախագահ Ս. Պատրիարք Մկրտաւիչ արքեպիսկոպոս խորհեանք. — Կե. րիւի որ սխալ հասկացողութիւն մը «կայ, և դեռ ևս պիտի տեսէ այն, «կուզեմ ես այս խնդրոյն վրայ իրաւասխոհ ընել զամենքը : Ասկէ քանի մը ատարի առաջ ճարտարին մէկը ըսաւ «Հայոց Ազգին» — ձեր Սահմանադրութեան անկէ քառակուսի է և չի քալեր. դնացէք տաշեցէք զայն — կը «յիշէք թէ զայս ըսողն ո՞վ էր : Նա «խաբէջ զմեզ և գնաց. վասն զի կը «տեսնեմ թէ Հայոց Սահմանադրութիւնը քառակուսի չէ և կրնայ քալել, ինչպէս Սպրօ Էֆէնտի ալ ըսաւ, «այլ մեր մտքերն են քառակուսի : Սահմանադրութեան չգործադրուելուն պատճառը ուրիշ տեղ է, զայն բնորոշուել պէտք է :

Տարակոյս կը վերցունեն արդեօք Ս. Պատրիարքի սոյն խօսքերն որ Ապրօ Էֆէնտիի ըսածը հաստատուելով Սահմանադրութիւնը գործադրելի է ըսելէ զատ, մինչև իսկ կը պահարակէ այնպիսիները, որ անգործադրելի է կրտն, և կը յանդիմանէ զանոնք, յեր մարտին են քառակուսի ըսելով, և բացարձակապէս յայտարարելով թէ «Սահմանադրութիւնը անգործադրելի է չի քալեր քսելը» խԱՔԻՈՒԹԻՒՆ է :

Կարծեմ բաւ է այս, նախորդ քաղ, ժողովոյ ժամանակին համար : Գանք ներկայ քաղ. ժողովոյ ժամանակին :

1872 Օգոստոս 10, ատենագրութիւն խառն ժողովոյ արդի քաղ. ժողովոյ ընտրութեան հաղիւ ամիս մը ետեւ. տես, «բացատրութիւն հրատարակի քաղ. ժողովոյ, անուն տեսարակին մէջ :

Ս. Պատրիարք. — Սահմանադրութիւն չկայ այս սեղանին վրայ, այս սեղանին վրայ, ըստ որում վերաքննութեան տակ է ինձի համար, մինչև որ վերաքննութիւնը բոլորովին լիննայ, «ես ինքնին պիտի գործադրեմ ասանկ «խնդիրները, քանի որ հարկն օտիպէ : «Ընդհ. ժողովոյ մէջ ալ արդէն քանի-

ցըս յայտնեցի թէ Սահմանադրութեան անցուկ շրջանակէն դուրս պիտի ելնեմ ՚ի ստիպել հարկին : Վանայ համար դուրս ելայ և պէտք եղածը գործեցի. նոյնպէս պիտի գործեմ ուրիշ առիթներու մէջ ալ, երբ հարկը պահանջէ : Գիտեմ թէ Ընդհ. ժողովը չի տար ինձ այդ արտօնութիւն, բայց «ես խղճիս և եկեղեցւոյ Աւետարանի պաշտօնէութեանս գիտակցութեամբ պիտի գործեմ. ինձի համար Սահմանադրութիւնը այսպէս կըմբռնեմ. «կառք մը յանձնուած է ինձ, ես զայն պիտի քալեցնեմ, քանի որ կառավարն ես եմ. երբ կառքը տարած «ժամանակս որ ճանրուն վրայ ապաւած «կայ, պիտի դարձնեմ և հարթ ճանքայէն պիտի տանիմ. յաւիտեան մի պահանջէք յինէն Սահմանադրութեան «ճշդութեամբ գործադրութիւնը (1) «ուր որ խոչընդոս մը ելլէ իմ դէմս, «պիտի անցնիմ այդ խոչընդոտը : :

(Շարունակելի)

ԿՐԿՏԻԿՆ

Իմացանք թէ Սքովադի առաջնորդը որն որ Բ. Դրան պահանջմամբ հոս բերուիլ հրամայած էր մեր Ազգ. Պատրիարքարանի, երէկ երեկոյ մայրաքաղաքս հասեր է :

Երէկ Շէրիֆ բաշա խանը առաջնորդութեամբ օտա պաշի ստորագրութիւն մը բացուեց է խորհեանք սրբագրելի հրատարականը չընդունելու համար և անմիջապէս 10/12 ստորագրութիւն դրուեց է :

Արապկիր 8 հոկտ. 1873

... Խմբագիր . . .

Աշխարհս գիտես թէ ամէն օր՝ տարբեր լաթեր կառնէ կ'հագնի. և այնչափ տեսակ դիմակներ կառնէ կ'գործածէ՝ որ զինքը իմանալու համար պէտք է մարդ մեծ խելք և շատ խորագիտութիւն ունենալ : Ընդդ. այս կարգէն է Մախի 14/10 թիւ թերթով փրկապոս Գաբրիէլեան ստորագրութեամբ հրատարակուած նամակը : Թէ և այդ նամակին մեք կարեւորութիւն չէինք տար հերքումը իր մէջ կրելուն, եթէ Սաղաթիլեան Հ. Կարապետ աղան իրեն ուղեւալ չուայլ գովեստները մերժելու ելլէր :

Նամակագիրը կըսէ (Արժ. Բառնարա հայր Սահմանադրութիւնը գոր-

(1) Այս այն Պատրիարքն է որ այս տարի ալ գրեթէ սոյն յայտարարութեամբ Օգոստոս 2 ին տուած հրատարականը, «սահմանադրութեան ճշդութեամբ գործադրութեան» պայմանով ետ առաւ Օգոստոս 24 ին դերովը եւ յետոյ նօրէն տուաւ :

Ճադրելու համար աշխատութիւնը չէ խնայեր, և իր գործերովը ընդհանուրին սիրելի եղեր, միայն ոմանց նենգութիւնը հեռատեսելով առաւօտ մի մեկներ է կ. Պոլիս սղևորելու) այս պարբերութեամբ հետևցուցեր է ոմանց նենգամիտ ըլլալը, բայց ո՞վ է այդ ոմանք ըսածը, և ի՞նչ է նենգամտութիւնին բնաւ ապացոյց չկայ : Միանգամայն առաւօտ մը առանձինն մեկներ է ըսելով՝ հասկեցնել կուզէ թէ դժգոհութեամբ մեկնած է, և կամ չը կար ն. Հայրութեան սիրելի մը որ գոնէ կէս ժամու չափ ուղեկից լինէր. վերջապէս որ կերպն ալ ըլլայ, ընդհանուրին սիրելի եղեր է ըսածին հակառակն է. ուստի այս պատմութիւնը հիմնովին սխալ ըլլալը, ամեն ողջամիտ անձինք կրնան մակարերել, որ ընդհանուրին սիրելի եղող անձ մը, եթէ ո՛չ ամենքը՝ գոնէ մէկ քանի անձինք ողջերթ ըսելու համար ճանապարհ դրներու կերթային. սակայն Բառնարա հայրը ինչպէս առանց լուր տալու եկաւ նոյնպէս դնացած ատեն չուղեց իմացընել և սին փառքով փառաւորիլ. բայց այս չէ նպատակը պարոն փրկապոս, Բառնարա հայր կ. Պոլիս ուղևորիլը, իորև կանխարան նամակիդ. Սաղաթիլեանը յերկրէ յերկինս բարձրացնել է, ժողովրդական դիմակով, ինչպէս կըսես բացագանչութեամբ, (Սաղաթիլեան Մ. Կարապետ ուղան 50 հազար զրշ. Մայր վարժարանի կըտակ բրած և քանի տարի է ՚ի վեր ծախսը հոգացած է, յունիս 15 ին օրն ալ՝ նոյն վարժատան ճակատագիրը սև մրուրով ծածկուիլը տեսնուած է ևն) :

Պարզեք խնդիրը, Սաղաթիլեանի 50 հազար զրշի կտակ մը ունենալը ճիշդ է, և քանի տարի է ՚ի վեր Ազգային Մայր վարժարանի ծախսը թէև բրած է, բայց բրած կտակին գումարի տոկոսիւք բրած է մինչև ցարդ վճարած չըլլալուն : Խեղճ նամակագիր, Արապկերի ազգայինք Սաղաթիլեանի վճարելի հտակին իբրև վճարեալ՝ իր շնորհակալիքը և յարգանքը ընդ միշտ յայտնած է, եթէ կ'բաղձաս Սաղաթիլեանը սրբոց կարգը դասել ՚ի դուր, ինչպէս երբեմն յանդգնելով մինչ իսկ Ս. Եկեղեցւոյ մէջ իբրև բարձրաստիճան եկեղեցական նկրտած է. քեզ նրման մոլեռանդներէ քաջալերութիւն գտնելուն, դ. ք Սաղաթիլեանք անխրջճարար կ'ժպրհիք մահացու հարուածներ ուղղել Ազգութեան և յանուն Սահմանադրութեան հակասահմանադրական ըլլալ, և ուր ուրեմն յադդիմակիդ ալ մերկանալով վճարելի կտակի մը տակ խարէութեամբ Ազգային լուծայովը շինեալ հոյակապ վարժարանը, որ իր կտակին երկապատիկ արժէքը ունի, առանց Տնտեսական և Թաղական խորհրդոց գիտութեան՝ քրմացը համաձայն չինութիւններ ընելէն վերջը, Ազգային յարկ մը՝ Սաղաթիլեան Մ. Կարապետի վարժարան քարը դնելով՝ յանձնականին վերածելուն տա-







# ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ՊԱՉԷՆ ՄԱՐԱԶԱԽՏԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Պագէնի ամբաստանութեան տեղեկագրին ընթերցումէն յետոյ, որոյ համառօտ մեկ քաղուածքն անցեալ շաբաթ աւուր թերթովս հրատարակեցինք, դատաստանական ատենին նախագահ Օմարի դքսին թողտուութեանը վրայ, Պագէն մարաշխտին իրեն ՚ի պաշտպանութիւն ասկէ յառաջ հրատարակած «Բէնի բանակը» անուամբ տեղեկէն քաղելով, սոյն դատին մէջ իրեն դէմ յառաջ բերուած ամբաստանութեանց մէկ քանիին վերաբերեալ արդարացուցիչ մէկ յիշատակագիրը կը կարգացուի, որոյ աւարտմանէն յետոյ Ատենին նախագահը Պագէնի ուղղելով խօսքը՝ կ'ըսէ :

Մարաշխտ, կարգացուած տեղեկագրէն, ինչպէս լսեցիք, կը հետեւի թէ դուք ամբաստանեալ էք՝ ձեր իշխանութեան ներքեւ գտնուած պաշտպանութեան միջոցները չ'սպառած, և պարտաւորութեան ու պատու պահանջումն ամբողջ չը կատարած՝ թշնամոյն անձնատուր և Մէցի ամբողջութիւնն անոր յանձնած ըլլալուդ համար :

Ասկից զատ սա՛ ևս կը հետեւի թէ դուք ամբաստանեալ էք, ամբացեալ գիրքի մը մէջ գտնուելովսիդ հանդերձ, ձեր բանակը զինաթափ ընել տալու նը պատակաւ անձնատուութիւն մը կնքած ըլլալուդ համար, առանց ընելու ամեն ինչ որ կրնար օգտակար լինել պաշտպանութեան, և ինչ որ ընել կը պահանջէր պատիւն ու պարտաւորութիւնը, ոճիրներ՝ որք զինուորական օրինաց 209 և 210 յօդուածներու մէջ նախատեսուած և պատժոյ ենթարկուած են :

Թեոյ նախագահը լաջօ փաստաբանին դառնալով կ'ըսէ :

Ըստ օրինաց, կ'ազդարարեմ ամբաստանելոյն փաստաբանին ալ, որ օրինաց հարկ եղած յարգանքին և իւր խղճին հակառակ առանց բան մը խօսելու, պարտաւոր է բոլոր ըսելիքը չափաւոր, հանգարտ և պատշաճ եղանակաւ մը յառաջ բերելու (1) :

Տարէք այժմ Պ. Մարաշխտը :  
Դատաստանը պիտի սկսի յառաջիկայ երկուշաբթի օր ժամը մէկին :

### Ատեն 13 հոկտեմբեր

Պագէն մարաշխտին այն մեծ դատաստանը, սոյոգն ըսելու համար, բուն այսօրու ընէ կ'սկսի : Ունկնդրաց անթիւ բազմութիւն լեցուած է սրահը, ուր ամեն կողմէն այր և կին առաւօտուն կանուխ դալ հասնիլ սկսած են : Դող պատած է դամբնքը : վասն զի գրաւոր

(1) Այսպիսի ազդարարութիւն մը դիւանին կողմէն եթէ մեր երկու կողման երեսփոխանաց օմնեց ալ եղած ըլլար. կարծեմք վերջին ազդարար յուզումը այս ատիւն ձանձիւ չէր հասնէր :

ընթերցումներն աւարտած, և հարցաքննութեան առաջին օրն ըլլալով, այսօր խօսքը մարաշխտին պիտի արուի խօսելու. որուն մօտը ճարտար փաստաբան մը կը կենայ, Պ. լաջօ, ամբաստանելոյն տալիք պատասխաններուն մէջ վտանգաւոր խտտորումներն և յանցապարտ միտումներն անշուշտ արգիւելու ձիշդ ժամը մէկին՝ խորհուրդն նիստ կը կազմէ, և նախագահը կ'իմացնէ թէ ատենը բացուած է :

Պ. Բուհէ, որ մինչև սոյն օրը ներկայացած չէր, այսօր կը ներկայանայ, ինչպէս նաև ուրիշ բազմաթիւ վկայներ, որք կը յայտնեն թէ իրենք առաջին կոչման անձամբ պատասխանած չ'էին : Նախագահը ցոյց կուտայ ասոնց թէ ամբաստանութեան կէտերը ինն առանձին մասերու բաժնուած, և այս առանձին մասերն ալ զատ զատ որոշեալ ժամանակներու մէջ քննելու սահմանուած ըլլալով, իրենց տալիք վկայութիւններն ասոնց ո՛ր մասին որ կը վերաբերի՝ կրնային նոյն օրը ներկայանալ :

Նախագահը Պագէնի հարցաքննութիւնը սկսելով, կը ծանուցանէ թէ ցոյց տրուած ամբաստանութեան կէտերէն այս աւուր համար՝ միայն երկու կէտին վրայօք հարցում պիտի ըլլայ, որք են մարաշխտին հրամանատարութիւնն ստանձնելը, և օգոստ. 13 էն մինչև 19 ըրած զինուորական գործողութիւնքը :

Առ որ Պագէն պատասխանելով, ինչպէս պիտի տեսնուի, կը ջանայ ցոյց տալ թէ ինքը յարմար դատեր է Մէցի շուրջը բռնել կենալ դերմանական բանակը անգործութեան մէջ պահելու և ժամանակ տալու համար, որ Շալոնի բանակը ատեն ունենայ ինքզինքը վերակազմելու :

Սքիքերէնի պատերազմէն յետոյ, կը հարցնէ նախագահը, ո՞վ հրաման տուաւ բանակին կեդրոնանալու :

ՄԱՐԱԶԱԽՏԸ. — Ընդհանուր վերատուչ պաշտօնակալը :

Այն ատեն նախագահը ցոյց կուտայ Պագէն մարաշխտին հրամանատարութեանը ներքեւ գտնուող այլ և այլ զօրաբանակաց գիրքը, առ որ մարաշխտը հետեւեալ կերպիւ կը պատասխանէ :

Բանակին ո՛չ ալ թելին, ո՛չ ալ դէպ ՚ի Շալոն յառաջ խողալուն նկատմամբ տրուած հրամաններուն և ո՛չ մէկէն տեղեկութիւն մ'ունէի : Այդ հրամանը ուղղակի Ֆրոսար զօրապետին տրուած ըլլալու էր, որոյ զօրախումբն ալ դէպ ՚ի Շալոն պիտի քայլէր :

ՆԱԽԱԳԱՀ. Օգոստ. 8 ին Ֆրոսար զօրապետը Գուրթօքէն կը գտնուէր. մինչդեռ դուք Ֆուլքըմօն էիք : Նոյն ամսոյն 9 ին ալ կայսեր այցելութիւնը կ'ընդունէիք. գլխաւոր հրամանատարութիւնը ձեզի յանձնելու նկատմամբ խօսք մ'ըրաւ կայսրը :

ՄԱՐԱԶԱԽՏ. Ո՛չ, Պ. Նախագահ : Հարց. — Ի՞նչ ըսաւ ձեզի :

Պատասխան. — Ըսաւ թէ աւելի՛ աղէկ էք Մէցի պարսպացը ներքեւ հաւաքուիլ :

Հ. Դուք գլխաւոր հրամանատարութիւնն ստանձնած էիք, երբ կայսրը 12 ին իւր հրահանգները ձեզի կը հաղորդէր :

Պ. Այո՛. բայց հրամանները վերատեսուչ պաշտօնակալը կուտար, և շատ չ'անցած՝ հակառակ հրամաններ տրուեցան :

Հ. Օգոստ. 12 ին կայսրը կամուրջներ շինել կը հրամայէ Մօզէլ գետին վրայ : Այս հրամանը դիտէի՞ք :

Պ. Այո՛ :  
Հ. Եւ դուք ատոր դործողութեանը վրայ հոգ տարի՞ք :

Պ. Ես նոյն միջոցին կայսեր քովս երթալու պարտաւորուած էի :

Հ. Ի՞նչ ըսաւ ձեզի կայսրը :  
Պ. Յայտնեց ինձ թէ բանակն և հասարակաց կարծիքը կը պահանջէին որ այդ հրամանատարութիւնն ինձի յանձնուի : Ըսի իրեն թէ առ այդ՝ ինչ աւելի հին մարաշխտներ կը գտնուէին...

Հ. Դուք ձեռնէ վորձ մ'ըրած չէի՞ք բնաւ այդ հրամանատարութիւնն առնելու :

Պ. Բնաւ :  
Հ. Վկայութիւնները լսելէս յետոյ՝ նորէն այդ կետին վրայ կը դառնանք : Հիմայ սա՛ պիտի հարցնեմ թէ, վերատեսուչ պաշտօնակալին տուած հրամաններէն զատ կայսրն ինքիմէ ուրիշ հրամաններ չը տուա՞ւ ձեզի :

Պ. Բնաւ :  
Հ. Իսկ դուք ևս հարկ չը դատեցի՞ք իւր կարծիքն առնուլ բռնելիք ընթացից գլխաւոր կետերուն նկատմամբ :

Պ. Բնաւ, հարկ մը չը տեսայ զայդ ընելու :

Հ. կայսրը չը հաղորդեց ձեզի Մէցի զօրապետը պաշտպանութեան վիճակի մէջ գտնուլ համար իւր տուած հրամանները :

Պ. Ո՛չ :  
Հ. Պահեստի զօրաց բանակին զըրկած հրամաններուն վրայօք ալ բան մը չ'ըսաւ ձեզի :

Պ. Ո՛չ, ատոր նկատմամբ Ֆուլքըմօնի մէջ միայն խօսք մ'անցաւ, այն ալ խիստ հարեանցի :

Հ. Ձեր սպայակոյտի գլխաւորին ընտրութեանը նկատմամբ առարկութիւններ ըրի՞ք իրեն :

Պ. Երբէք, վասն զի պատճառ մը չ'ունէի ենթադրելու թէ զիս պիտի տեղափոխեն, և այն ալ վերջին օրերն էր որ ժարրա զօրապետին դէմ գանգատեցայ :

Ասկէց զատ ես կայսեր տեղակալն ըլլալով այն ատեն, միայն անոր հրամանացը ներքեւ կը դործէի :

Հ. Ե՞րբ դադարեցաւ բանակին գլխաւորացը հետ կայսեր յարաբերութիւնները :

Պ. կարծեմ թէ կամ 13 ին էր, կամ 14 ին :

Հ. Հիմայ օգոստ. 13 էն մինչև 19 եղած զինուորական շարժումները կ'ուզեմ իմանալ : Ունի՞ք այդ մասին բացատրութիւններ տալու :



Պ. Որովհետև տեղեկագիրը շատ խիստ խօսեցաւ ինձ դէմ այդ մասին, ուստի ես ալ պիտի հերքեմ հարկաւ ինձի վերագրեալ յանցանքները . . . :

ՆԱԽԱԳԱՀ. Երբ վկայները լսեմք, կարծեմք թէ այն ատեն աւելի պատշաճ է ձեր ալ արժան դատած բացատրութիւնները իմանալու : Իսկ հիմայ ձեր գի եզրած հարցումները միայն քանի մը որոշեալ կետերուն կը վերաբերի . Օգոստ . 13 ին տրուած հրամաններուն ամենքն ալ ձեր ներշնչութեամբն էին :

Պ. Այո՞, Պ. Նախագահ, ես 13 ին հրաման ըրի որ անցքերը հետազօտեն, իսկ ատոր մանրամասն պարագայներուն վրայ հսկելը՝ ժարրա զօրապետին պաշտօնն էր :

Նախագահն այս միջոցին դատին վերաբերեալ գրութեանց մէջէն թուղթ մը հանելով մարաջախտին կուտայ հարցընելով թէ սա իւր գիւրնն է :

Պ. Ոչ, Պ. Նախագահ :

Հ. Լաւ, բայց դուք չէ՞ք ծանուցագիրը գրել տուողը :

Պ. Այո, ես գրել տուի . Բայց իմ գրել տուած ծանուցագիրս աւելի կատարեալ էր :

ՆԱԽԱԳԱՀ. Թող կարգայ դիւանագրայրը առաջին պարբերութիւնը :

Դիւանագրայրը կը կարգայ . « Մէջի անդի կողմի և առջևի կամուրջներուն գտնուած վիճակն ստուգել . և թէ՛ այս կամուրջներն ո՛ւր կը յանգին և ո՛ւր կը տանին . . . » :

ՄԱՐԱԶԱՍՏ. Այո՞, Մանէք զօրապետին կուտայի այս ծանուցագիրը :

Հ. Շարժման համար տուած հրամաններ մէջ բանակը երկու մասի կը բաժնէիք, որոնք դէպ ՚ի վերտէօն պիտի յառաջանային, մին Էրէնի ճանքով, միւսն ալ վօսբաբի : Բայց ատոր ծայրը կ'երթար մինչև կրավրթ կը յանգէր, ուր ճանքան երկուքի կը ճղի :

Պ. Ճանապարհին հողը ժարրա զօրապետին թողած էի, ինչպէս որ ստուգիւ ալ անոր կը վերաբերէր . իմ գործս պատերազմել էր միայն :

Հ. Մօզէլ գետին վեց անցքէն զատ, որք ամրոցաց թնդանօթներուն ներքևը կը գտնուէին, չէի՞ք կրնար Սրի և Նօվանի կամուրջներն ընտրել անցնելու :

Պ. Ատոնք ընդհանուր սպայակոյտին քննութեանը վերաբերեալ պարագայներ էին :

Հ. Եթէ այս կամուրջներէն անցնելու պէտք չունէիք, չէի՞ք կրնար զանոնք խղելու հրաման ընել :

Պ. Հարկ չը կար, թշնամոյն յառաջընթաց դէտերն արդէն ֆրուար հասած էին :

Հ. Ուրեմն ֆրութօն զօրապետը իմաց չը տուաւ ձեզ թէ օգոստ . 11 ին թըշնամոյն յառաջընթացներն ՚ի Պօրնի կը գտնուէին :

Պ. Այդպիսի տեղեկութիւն մ'առած ըլլալս չեմ յիշեր, բայց Մանէք զօրապետը ստացած ըլլալու է զայդ :

Հ. Իսկ եթէ գիտնայիք թէ թշնամին մանառիկ կամ չըջանաւոր շարժում

մ'ընելու վրայ է, կրնայի՞ք ձեր հեծելադնդերը Մօզէլի հովիտը զննելու հանել :

Պ. Մնտարակոյս, եթէ այդ լուրէն տեղեկութիւն ունենայի :

Նախագահը այս միջոցին Պագէն մարաջախտին հաղորդուած տեղեկագրութիւն մը կարդացնել կուտայ, որուն մէջ նշանակուած է թէ 9 որ վիշապագունդը կազմ և պատրաստ կը գտնուի երթալ ճանապարհը զննելու :

Հ. Եթէ թշնամոյն կողերնուդ դէմ յառաջանալը գիտնայիք, կ'երևի թէ քանի մը հեծելագունդ բաւական էր ձեզ ինչ ընելիքնիդ որոշելու : Դուք մթերքը բանակէն առաջ երթալու հրաման տուած էիք, պատուիրելով միանգամայն որ կիրճերուն առաջը կեան սպասեն :

Պ. Չէի ուզեր ատոնք բանակէս հեռացնել, և մէկ մ'ալ կը վախնայի որ ընթացքնուս արդելք չ'ըլլան :

Հ. Հարկ չը դատեցի՞ք գոնէ անգամ մը թշնամոյն ուր ըլլալը գիտնալու :

Պ. Այո, Պ. Նախագահ կայսրէն թողութիւն խնդրեցի յետագարձ յարձակում մը փորձելու, սակայն չը թողուց :

Հ. Նոյն ամսոյ 14 ին, մինչդեռ երկու զօրաբանակ տակաւին Մօզէլի անդի կողմը կը գտնուէին, դուք թըշնամիէն յարձակում կ'ընէիք : Նախ Մէթմանի զօրաբաժինն էր յարձակում կրողը, դուք իսկ վայրկեան մը պաշարուեցաք թշնամիէն, և ուսերնուդ վընասուեցաք, որոյ ուսանոցնիդ (էքօլէթ) դէմ դրաւ, իսկ դուք այս վէրքը առանց բանի տեղ դնելու՝ դարձեալ կուռն ներկայ գտնուեցաք :

Պ. Երգարե Պօրնի պատերազմը մինչև երեկոյեան 8 տեղց, որ ատեն հրաման տուի նահանջելու : Ես մինչև առաւօտեան ժամը 1 գործողութեանց ներկայ գտնուեցայ, յետոյ գացի Պօրնի կուռն և իմ անձնական սպառնութեանցս վրայօք կայսեր տեղեկութիւն տալու : Որոշուեցաւ որ դէպ ՚ի վերտէօն գնացքնիս շարունակենք ապահով միջոցներով :

Հ. Մօզէլ գետէն անցնելիդ որքան ատեն ուշացնելու պատճառ եղաւ այս կռիւը :

Պ. Առնուազն 12 ժամու չափ ետ ձգեց :

Հ. Սակայն զօրաբանակին մէկուն խանգարուիլը չէր արդեօք այդ յապաղման բուն պատճառը :

Պ. Զօրաբանակին հրամանատարները սխալմամբ ցոյց տրուած ուղղութիւնները փոփոխեցին :

Հ. Եթէ առաւօտուն կուռի բռնուած ըլլայիք, չէ՞ք կարծեր թէ յաջողութիւնը կատարեալ պիտի ըլլար :

Պ. Ատոր տարակոյս չ'ունիմ :

Հ. Օգնական կառախումբը, որ 2,585 կառքէ կը բաղկանար, փոխանակ արձակելոյ հրաման տալու, աւելի օգտակար չէր մի ըլլար զանոնք դատարկ ՚ի

վերտէօն ղրկելու, որով ճանքան ալ բացուած կ'ըլլար :

Պ. Կը խոստովանիմ թէ մտքէս չ'անցաւ զայդ . ես կը խորհէի թէ այդ կառքերն արձակելովս, կրնային օգտակար ըլլալ Մէջի մէջ պաշար փոխադրելու :

Հ. Կայսրը 16 ին զձեզ չը կանչեց, և իւր դէպ ՚ի Շալօն ուղղուելու մասին դիտաւորութիւն չը յայտնեց :

Պ. Շալօն երթալու մասին 15 ին խօսեցաւ ինձի :

Հ. Ի՞նչ ըսաւ :

Պ. Գրեթէ ոչինչ, երկար ատեն խօսակցեցանք, սակայն վարանումէն զատ ուրիշ բան մը չը կրցի տեսնել : Ըսաւ ինձ որ թերևս Մէջ կենալ պէտք պիտի ըլլար, գէթ մինչև որ փոթորիկն անցնի : Իսկ 16 ին առաւօտուն այս աստիճան սաստիկ յարձակում մը բնաւ չ'էինք յուսարկել :

Հ. 17 ին առաւօտուն երբ ալ թեւերնուդ օգնական նոր զօրութիւն մը հասաւ, կարելի չէր դիւրբերնիդ նորէն բռնել :

Պ. Ոչ, վասն զի 16 ին շատ մարդ կորսնցուցինք :

Հ. Իսկ գոնէ չը խորհեցա՞ք բռնել գերքերնիդ :

Պ. Այո՞, սակայն անկարելի էր :

Հ. Բայց վերջապէս չէի՞ք կրնար դէպ ՚ի Պրիէյ քաղելու ճանքայ մը բռնել :

Պ. Համոզուած էի թէ ո՛ւր որ երթանք, թշնամին ետևնուս պիտի դար, և դեռ 30,000 հօգի կար գետին ալ կողմը :

Հ. Կ'ըսէք թէ պաշարի և մթերքի պակասութիւնն էր գնացքնիդ արգելուղը :

Պ. Այո՞, մանաւանդ մթերքի պակասութիւնը :

Հ. Իսկ եթէ պահեստի գտնուած մթերքը զօրաբանակաց մէջ բաժնելով . . .

Պ. Պօղոս առաքեալը հագուեցնելու համար չէի կրնար Պետրոս առաքեալը հանուեցնել :

Հ. Սակայն չը տեսա՞ք մթերքի անհաւասար սպառումը, և չէի՞ք կրնար միջոցներ ձեռք առնել տալ շուտով մթերք բաժնելու զօրաբանակաց :

Պ. Ատի Սօլէյլ զօրապետին կը պատկանէր :

Հ. Վերատեսուչ պաշտօնակալը ձեզի 450 կառք պաշար ղրկած ատենը, ինչո՞ւ հրաման ըրիք որ Բլաբըլիլ դարձնեն ատոնք :

Պ. Չեմ յիշեր այդպիսի հրաման մը տուած ըլլալս :

Հ. Հրամանը տրուած է, սակայն գիտնալու էիք թէ վերտէօնի մէջ պաշար կար պատրաստուած :

Պ. Իմացայ, բայց 16 ին :

Հ. Ի՞նչ եղան այդ միւս պաշարները :

Պ. Ես հրաման ըրեր էի զանոնք բաժնելու, սակայն Շարլէն վերակացուն է զանոնք այրելու հրաման տուողը :

Հ. Յիրաւի երկու միլիոն ռոճկի (թաշին) պաշար կրակի տրուեցաւ : Լաւ 16 ի երեկոյին ցոյց տրուած ու հրամայուած ճանքէն ինչո՞ւ ետ կեցաք :



Պ. Զօրապետաց կարծեօքը վտանգաւոր էր այդ ճանքան և քանրօպէր մարաջախտն ալ այդ կարծիքէն էր :

Հ. 18ի առաւօտուն չիմացա՞ք թէ թշմանին վրանիդ պիտի յարձակէր , որով պահեցաւ զօրքերնիդ գործածելու պիտի հարկադրուէիք : Եւ ի՞նչ գիրք բռնել տուիք , օրինակի համար ձեր հեծելագունդերուն :

Պ. Այնպիսի գիրք մը բռնել տուի որ հովիտն անցնել ուզող զօրաբաժնե-րուն վրայ յարձակում պիտի ընէին :

Հ. Ուրիշ գիրք մը չը յատկացուցի՞ք ատոնց . . . : Իսկ պահեցաւ թնդանօթածիդ գունդե-րուն կարգադրութիւնը զօրապետի՞ մը յանձնելու է : Եւ դուք պահապան զօ-րաց կարգադրութիւնն ալ ձեր վրայէն նետեր էիք , թողլով Պուրպաքի զօրա-պետին որ ինչպէս յարմար կը դատէ՞ այնպէս գործել տայ :

Պ. Ատի Սօլէյլ զօրապետին յանձ-նած էի :

Հ. Կը կարծէ՞ք թէ գլխաւոր հրա-մանատար մը թնդանօթածիդ գունդե-րուն կարգադրութիւնը զօրապետի՞ մը յանձնելու է : Եւ դուք պահապան զօ-րաց կարգադրութիւնն ալ ձեր վրայէն նետեր էիք , թողլով Պուրպաքի զօրա-պետին որ ինչպէս յարմար կը դատէ՞ այնպէս գործել տայ :

Պ. Պուրպաքի զօրապետը կարի յա-ջողակ և հանճարնդ բարձրագոյն պաշ-տօնակալ մ'է : Ասկից զատ , իմ գըտ-նուած դիրքիս մէջ , չէի կրնար ստոյգ գիտնալ թէ ի՞նչ պէտք կրնար ունե-նալ քանրօպէր մարաջախտը . որոյ ար-դէն թնդանօթածիդ երկու գունդ զըր-կած էի :

Հ. Կուտոյն վիճակը դիտելու համար ձեր գտնուած տեղէն աւելի յարմար տեղ մը չէի՞ք կրնար ընտրել :

Պ. Երկրին գիրքը այնպէս կը պա-հանջէր որ բլուրին վրայ կենամ ալ ու ձախ կողմը հսկելու համար : Ասկից զատ Ային ընդունած վերքս զիս կարի նե-ղելով , չէի կարող ձիու վրայ մնալ ընդ երկար :

Հ. Չեր սպայակոյտին միջոցաւ ցոյց տուած չէիք բանակին կենալիք տեղը եթէ նահանջել պէտք ըլլար : Ըսի՞ք թէ ձեզի մտատանջութիւն պատճա-ռող միակ բանն այն էր որ թշնամին ամրացեալ դիրքերնուդ մէջ զձեզ չը պաշարէ :

Պ. Հարկաւ աւելի աղէկ էր որ ըջ մեզ մեր կեցած տեղէն դուրս հանէ :

Հ. Մինչև ժամը երեքը Պուրպաքի զօրապետը դեռ որոշ հրաման մ'ըս տացած չէր , ուստի ինքնակամ էր քանրօպէր մարաջախտին իւր օգնու-թեան հասնելը , որ դժբաղդաբար ուշ մնացած էր :

Պ. Պուրպաքի զօրապետը հրահանգ ունէր յարմար դատածն ընելու :

Հ. Չը կրցի՞ք ուրեմն նոր հրահանգ մը տալ իրեն :

Պ. Քանրօպէր մարաջախտը գիտէր արդէն թէ Պուրպաքի իւր տրամադ-րութեանը տակ է , ուստի կրնար պէտք եղած ատենը լուր զրեւոյժ զայն կան-չել :

Ասկից զատ ես կը կարծէի թէ ա-

մեն բան կարգին է :

Հ. Պօմօն գնդապետը ըսաւ թէ թէ դուք Պուրպաքի ներս մտնելու հրաման ըրեր էք :

Պ. Ոչ թէ մտնուեալ , այլ կենալու , վա-սըն դի կը վախնայի թէ Պուրպաքի ժամանակէն յառաջ չը բռնուի կուտոյ : Պօմօն գնդապետը սխալ հասկցեր է :

Հ. Սակայն թշնամին աւելի ալ թե-ւերնուդ վրայ կը յարձակէր , որոյ քան-րօպէր զօրապետը դիւցաղնաբար դէմ դրաւ :

Մարաջախտը կ'ըսէ թէ կայսրէն բացարձակ հրաման ընդունած էր դիպ-ւածոյ բերմունքին չը թողուլ գործը , և ամրացեալ բանակատեղին դառնալ Միին ստացած մէկ գոյն համեմատ : Այնուհետև մարաջախտը ուրիշ մէկ պաշտօնակալի մը զրկած գրութիւնը կը կորդայ , որ կը ծանուցանէր թէ ամենէն աւելի Ղէսսիի անցքը հսկել պէտք էր թշնամուոյն դէմ :

Հ. Արդ Մէցի տակը տուած պա-տերազմներնուդ հետևանքն եղած էր աւելի թշնամին Մէցի շուրջը կեցնել քոն թէ դէպ ի վերտէօն յառաջա-նալ :

Պ. Ճիշդ այդպէս էր :

Հ. Դատաւորական ատենին քննելիք բանը պատերազմին ռազմագիտական կամ քաղաքական ձեռնարկեալ միջոցնե-րը չէ , այլսա պիտի քննէ թէ ձեր ըսած ներք վկաներուն պատմածին , և ըս-տացեալ տեղեկութեանց համաձայն են :

Արդ , ձեր ըսածին նայելով , 18ր աւուր արդիւնքը Պրիէյի ճանքան ալ ձեզի կորսնցնել տալն եղած է , զոր մի-նակունեցած մէկ հատիկ ձանրանիդ էր :

Պ. Այո , կրած մեծ կորուստներնուս պատճառաւ :

Գունդեր եղան որոց հրամանատարու-թիւնը հարկւրապետի մը վրայ մնացած էր :

ՆԱԽԱԳԱՀԸ Սոյն հարցաքննութեան մնացորդն ալ վաղուան կը թողումք :

Ատեանը կը գոցուի ժամը 4 Մ/2ին :

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԲ

ԱՒՍՏՐԻԱ—ՀՈՒՆԳԱՐԻԱ

Վիէննա 30 հոկտ .

Պորսան բացուած ատենը շատ ոգե-ւորեալ էր : Հրապարակին կացութիւնը բարեւոքելու նպատակաւ կառավարու-թեան միջամտութիւնը դնոց բարձրա-նալովը ողջունուեցաւ :

Բեշթա 30 հոկտ .

Խիստ մօտ օրէն 75 միլիոն ֆիօրինի փոխառութեան ստորագրութիւնը պի-տի բացուի :

ԲՈՒՄԱՆԻԱ

Պուրէշ 30 հոկտ .

Հօհենցօլցերնի Յրեատէրիկ իշխանը

դէպ Արևելք ուղևորութիւն մը պիտի ընէ :

ՀԵԼԼԱՌԱ

Աթէնք 30 հոկտ .

Քօլէրայ կենալու կասկածները բո-ւրովին անհետացաւ երկրէն :

Արքայական ընտանիքն յառաջիկայ շաբթուն ֆօրֆույէն կը վերադառնայ : Նորէն դատաստանէն փախուստ տը-ւողներէն մէկ քանին բռնուեցան :

ՆԵՐՔԻՆ

Կայսերական հրամանաւ

Պալատի առաջին քարտուղար Ֆե-յիք պէյ Արդարութեան Ատենին ֆա-ղաքային բաժնին նախագահ ,

Հեռագրաց և թղթատարութեան վերատեսուչ Ֆէյլի պէյ Պօլտոյ քաղա-քապետ ,

Եղեռնադատ Ատենին նախագահ Սալիմ էֆէնտի Հեռագրաց և թղթա-տարութեան վերատեսուչ ,

Արդարութեան Ատենին ֆաղաքային բաժնին նախագահ Հաճի Ահմէտ էֆէն տի Եղեռնադատ ատենին նախագահ անուանեցան :

— Մեծ Եպարդոսն և պաշտօնէտյը հինգշաբթի երեկոյին ընթրիքն ( իֆ-թար ) Եէյլի-իւլ-իսլամ էֆէնտիին ա-պարանքն ընելով , գիշերն ալ հոն պաշտօնէից ժողով կազմեցին :

— Սերանիկի կուսակալ Միտհաթ բա-շա երկուշաբթի մայրաքաղաքէս պիտի մեկնի իւր պաշտօնատեղին երթալու :

— Թաթաւլա Յունաց թատրոնը անցեալները տրուած ներկայացման մը մէջ խել մ'անպատեհ և քաղաքակա-նութեան դպրոց խօսքեր տեղի ունե-ցած ըլլալով , յիշեալ թատրոնին տնօ-րէնը Բերայի պատժական ատենը դա-տաստանի քաշուելով հարցաքննու-թեան ենթարկուեր է :

— Անցեալները գաղղիացի մեքե-նադէտին մէկը Պօլսէն շոգենաւ մը կը հեծնէ որսի համար Բաշա Լիման եր-թալու : Շոգենաւը հոն հասնելուն , երբ ճամբորդք յարկին վրայ ժուռ կու-գային , նաւապետը որսորդին քանիցս ըրած աղդարարութեանը առանց ա-կանջ կախելու , մարդուն հրացանին վրայ կոխած ըլլալուն համար , գաղղիա-ցին բռնելուն պէս զնաւապետը խնձո-րի պէս ծովը կը նետէ , և ինքն ալ մօտը գտնուած մակոյկներէն մին կան-չելով , շունն ու հրացանը կ'առնէ ու մակոյկին մէջը ցատկելով ցամաքը կ'ել-նէ : Ծովն ընկղմող նաւապետն ալ վեր-ջէն լողալով կուգայ նորէն շոգենաւը կ'ելնէ : Չարմանալին սա է թէ այս դէպքը կատարուած ատենը շոգենաւին բոլոր ճամբորդներն ալ , որ ներկայ կը



գտնուէին, առանց ձայն մը հանելու պարզապէս հանդիսատես կեցեր են:

— Իսկէնտէրուն հրդեհ մը պտտահելով, 100 վաճառատուն, երեք տուն և երկու խան այրեր է: Բարեբաղդաբար մեծ ճիգ թափելով հրդեհին առաջը կրցերին առնուլ, առանց թող տալու որ այն մթերանոցներուն հասնի, ուր Հալէպի վաճառականք ապրանքներն հոն կը դնեն, և ուր և՛ հազար սնտուկ բէթրօլ կազ կը գտնուի եղեր:

— Բերայի քաղաքապետութեան մէկ քանի գործակալները առջի օր մեծ ճանրուն վրայ քանի մը պտղավաճառ տեսնելով, որոց ծախած պտուղին բոլորովին տհաս էր, արգիլեցին ծախել: և բռնածնուն պէս պաշտօնատունը զրկեցին, եղած արգելքին հակառակը վարուած ըլլալուն պատճառաւ պատժոյ ենթարկուելու:

Բերայի մէջ նորէն շուրի պակսութիւնը երևան ելլալով, նորէն հասարակութիւնը դժգոհիլ սկսած է: Աղբիւրներուն զրեթէ ամենքն ալ ցամքեր են:

— Իզմիրի երկաթուղոյ ընկերութեան հին գործակալներէն մին տմբատաներ է հրապարակաւ յիշեալ ընկերութեան կեդրոնական գրասենեկին վերատեսուչը, ընկերութեան վերաբերեալ մեծ գումար մը վրան անցուցած ըլլալը հաստատուելու պատրաստ լինելն յայտնելով:

— Էնկիւրիէն կը ծանուցանեն թէ երկու ճանրորդ կեօարիայէն Էնկիւրի գացած ատեննին, ճանքան հինգ զինեալ անձինք վրանին յարձակելով, ճանրորդներուն մէկը հոն կ'սպաննեն, և յետոյ կ'սկսին երկուքին վրան գլուխը կողոպտել, և բոլոր ունեցածին յափշտակել: ստակ ըլլալով ընդամենը 800 զրշի չափ գումար մը ելնելով վերանուն: Քաղաքին բնակիչները, որոնց քով մեծ յարգ ունէին այս երկու ճանրորդներն զայս լսելով յուզուիլ կ'ընկրսին:

Կ'ըսուի թէ տեղական իշխանութիւնը խուզարկութիւն մ'ընել հրամայեր է շարագործները գտնելով բռնելու:

— Բերայի գաղղիական թատրոնի տնօրէնը Պ. Մանաս որոյ դերասանական խումբը յառաջիկայ երեքշաբթի օրու ընէ խաղու պիտի սկսի: Կ'ըսուի թէ Գատըղիղի նոր շինուած թատրոնն ալ շաբաթը երեք թատերական ներկայացումներ տալու գիտաւորութիւն ունի, ուր եթէ Բերայի նման յաջողակութիւն գտնէ, Պօլսոյ գաղղիերէն ներկայացմանց սոյն հայազգի թատրոնապետը ստուգիլ Գատըղիղի հասարակութեան շնորհակալութեանն ալ պիտի արժանանայ:

Երեկ հետեւեալ նամակն ստացանք, զոր կը հրատարակեմք մեր հակառա-

կորպաց վերջին ճիգը իմացնելու համար միայն:

Մուէլիք  
Պու կիւն ցրուիչին պիտի շարջտա վէ սողաղլարտա Օրագիր սաթանլարըն արգասընա տիւշիւպ' քիմ քի Օրագիր ալըր իսէ' տինինի ինքեար էթմիշ օլտուն, հաղորդութիւնն իւտիւնէ:  
չօլուգ չոճուղուն խայըընը կէօրմէսին վէ զայրիւհիւմ հագարէթլէր իտուպ սաթըընըզը մէն իթմէյէ չալըմագտա տըր, պունու սիղէ խապէր վէրերիմ ի ճապընա պագմանը սիղէ ըաճի տըր:  
1873 հոկտ, 19 Թ. Թ. Ա.

### ԴՐԱՄԱԿԱՆ

ԸՆԹԱՑԻ ԱՐԺԵԹՂԹՈՑ  
Ղալաթիա 19/31 հոկտ.

Ընդհ. Պարտ. Արժ. բաց	53	30	
գոց	53	19	
բարձր գին	54	1	
ցած	53	18	
Րուսիէի Արժ.	Ձր.	123	
Նոր		70 1/2	
Ֆոխառ.	69ի	288	
	65ի	343	
	63	338	
Պօսիէթէ Ժէնէրալ	Լ. Մ.	8	28
Քրէտի Օսթ-Թիւրք		3	40
Գանձատումս 1872ի		80	1/2
Սօսիէթէ Օթօման		4	35
Գանք տը Բօնսթ.		5	30
Քրէտի Ժէնէրալ	Լ. Ս.	12	
Գանք վէրիսի			
Թրամվէյ		12	90
Բըբօր		10	բարա
Դրամագեղչ		19	0/0
Փոխնկգըր'իլնտ եռմս		110	7/8
	Բարիզ	23	5

ԸՆԹԱՑԻ ԴՐԱՄՈՑ

Օամ. ոսկի 100 զրշ. ի հաշուով	զրշ. ՓՄ.	
Անգղ. ոսկի	110	30
Բաղդ.	87	19
Բօլ	89	10
Քարպօն արծաթ	17	—
Թղթադրամ	14	30
Քըըմից	51	25
Ճերմակ մէճիտ արքր.	101	24
Հինգնոց	103	20
Մեթալիք	104	—
Պղինձ	120	10

Վիէննա 30 հոկտեմբեր

Րուսիէի Արժ. հին	ՁԼ.	53	25
Նոր		—	—
Քրէտի Օսթրո-Թիւրք		32	
Գանք Օսթրո-Օթօման		—	—
Աճիօ		107	75
Փոխնկգըր'իլնտ եռմս		112	90

Հոնտրա 29 հոկտեմ.

Անգղ. Արժ.	92	5/8
Օամ. բաց	47	3/8
գոց	47	7/8
Փոխ. 1869ի	56	
1871ի	60	1/2
Գանք Օթօման	13	

09. 76 . . . . . շոռլափ  
— 987 . . . . . 46984 Վափ  
— 87 . . . . . յոժ  
04. 89 . . . . . 0/0 9 . . . . . Ղաուվ  
2/1 72. 79 . . . . . 0/0 9 . . . . . ԲմՂ Ղեւոթ  
մգրդատիս 67 Ելմոյ

ԹԱՏՐՈՆ ԱՐԵԻԵԼԵԱՆ  
Բ Ա Յ Ո Ւ Մ Ն  
ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՑ 1873-74  
ՇԱԲԱԹ 20 Հոկտ. 1873 գիշեր ժամ 2 1/2  
Վարը-Լի-ն Պ. Մաղախանի  
ԵՐԿՈՒՑԻՄՆԱՊԵՏԻ  
Թատերգութիւն յերիս արարս  
Զ Ա Ի Ե Շ Տ  
ՄԱՐԴՍ ԿԱՏԱՐԵԱԼ 2Է  
Գիներ Օամ. Ոսկին 100 Ղուրուչէն

Ազգային Հիւանդանոցի մօմարանէն ելած թէ հասարակ և թէ հարօտեաց և ըն հանդէսներու համար ծաղկազարդ փայլուն և գեղեցիկ մօմեր, կը ծախուին Չաքմաքըըլար եօքուչու Մեծ Նոր խան միջնայարկ թիւ 49 Հիւանդանոցի գըրատենեկին մէջ, հորկ եղած ատեն ամեն ոք կրնայ ամեն ատեն իրեն ուղած ձևով և դիրքով մեղրամամ գըտնել հոն արժան գնով:  
Սարգիս Մ. Հիւարեան

Ի Լ Ա Ն  
Բէօչէ սարաֆը քէթիստասը Չըպըքըը օղու Բէրրէ Էֆէնտինին ազլի իլէ եէրինէ Միքրօեան Պօղոս Էֆէնտի նասպ վէ թային պուրուլմուշ օլտուղունտան բէնչչէնպիհ կիւնլէրի Պէօլիք Եէնի խանընտա օրթաքաթտա իթիխաղ օլունան 31 նօմէրօլու օտտտա թէճէմ միւ օլունանաղի էսնափ մէրքումէնին մալիւմէրի օլմագ իւզրէ լօնճա աղալէրի թարաֆընտան իլան օլունուր:  
1873 սեպտ. 24



Ե Ա Ն Ո Ի Յ Մ Ո Ի Ն Ք

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Ի Կ. Պօլիս Պահճէ-Գալիս  
Մեծ Մաքսատան դէմը Թիւ-ԿՅ

Մեծ Շահ 100,000 Յրանք

Մերձակայ Հատինական նոյեմբերին Գերմանիոյ Կօթա քաղքին մէջ քաշուելիք Պուքրէշի պարգևաւոր փոխաւորութեան Արժէթղթոց վիճակահանութեան Բաղդադիէրը կը ծախուին մեր Դրամատունը շահաւոր պայմանօք :

Թէ Թուրքիոյ և Թէ օտար տէրու թեմնց ամեն տեսակ Արժէթղթոց փոխանակութիւնք կ'ըլլան մեր Դրամատան մէջ , նոյնպէս նաև անոնց կտրոնները կը զեղչուին գոհացուցիչ կերպով , բոլոր Արժէթղթոց մինչև Հիմայ տեղի ունեցած վիճակահանութեանց վրայ մանրամասն տեղեկութիւն կը տրուի յաճախորդաց :

Տէմիրգափուլեան և Չօպանեան Ընկ.

Մեծարգոյ Տօքթօր Գ. Ճիվանեան Ատամագործ բժիշկն իր արուեստին պէտք եղած ուսումը Փարիզի մէջ աւարտելով մօտ օրերս մայրաքաղաքս դարձած և բընակութիւնն առ այժմ հաստատած է ՚ի Պէշիկթաշ Մեծ-Փողոց Քէօրիւ-Պաշի , իսկ մայիլ փաշային տանը դիմաց :

Մեծարգոյ Ճիվանեան ինչպէս Փարիզի նոյնպէս ալ Պօլսոյ մէջ իր ճարտարութիւնը քաղաքի գործողութեամբ ցոյց տալով լեծ համբաւ ստացած է :

Ըրած գործողութիւնները հետևեալներն են .

1. Ամեն հիւանդ և ցաւոտ ակրաները կը բժշկէ , և նոր հնարքով մը կը լեցնէ այնպէս որ մինչև 20 տարի կը դիմանայ :
2. Արդէն բաշուած ակրաներուն տեղ նոր ակրաներ կը դնէ մասնաւոր եղանակաւ մը , որ բնական ակրայից պէս ամեն տեսակ կերակուր կը ծամեն , և գեղեցկութեան ու դիմացկանութեան մասին բընականներն իսկ կը գերազանցեն :
3. Մուռ բուսած ակրաները կը շոկէ :
4. Անցած ակրաները կը ճերմակցնէ և իրենց բնական գոյնը կուտայ անոնց :
5. Նոր փտիլ սխած ակրաներուն փրտութեան առաջը կ'առնու :
6. Կտորած ակրաները դիւրութեամբ և առանց ցաւի կը հանէ :
7. Մուկնց (եայի) և դամի վրայ ակրաներ կը շինէ .
8. Բերնին ծակուած կամարները կը գոցէ :
9. Չէնքէ փխտուած ամբողջ կզակ և կզակի ոսկորներն արհեստական կերպով կը նորոգէ :
10. Տեղերնուն խախտած ակրաները կամրապնդէ զանազան եղանակաւ :
11. Ակրաներուն երկնայուն , լինտերու քաշուելուն , բերնի հօտի և առաջը կ'առնու :

Կը գտնուի ամեն օր՝ բաց ՚ի կիրակիէ ժամը Յէն մինչև 11 Պէշիկթաշ իւր բնակարանը . իսկ ժամը Յէն առաջ ուղղին տունը կերթայ :

ԳՈՒՄԱՆՅԱՐԻԱ

Կիպրոսի այս ազնիւ և սննդարար գինին որ մարմինն ու արիւնը զօրացնելու

և ստամոքսի ուժ տալու համար շատ անգամ փորձուած և մեծ օգուտներ տեսնուած է , 3 էն մինչև 20 տարեկան և Անգրիանուպոլսյ ազնիւ և մաքուր 2 էն մինչև 10 տարեկան գինիններ , և ուրիշ քանի մը տեսակ գուտ և մաքուր գինիններ , և պատուական օղիններ են , որ ամեն առնող շատ գոհ պիտի ըլլայ զմրած շիշներով կը ծախուի չափաւոր գիններով Կ. Պօլիս Թահմիզ փողոց Թիւ 9 մաղազան : Օ. Ք. սոյն մարգարով չը զմրուածներն երաշխաւորեալ չեն :

JOB ԲՈՒՆ ԺՕՊ ՍԻԿԱՐԻ ԹՈՒՂԹ

Կը ծախուի չափաւոր գնով Եօրկիատի Խան Թիւ 8 Պահճէ-Գաբու : Շատ դնողներուն համար բաւական զեղչ կ'ըլլայ :

Ա.ՁԴ

Սալմաթամիւրք Պալօղլու փողոց , աղջկանց վարժարանին կարգը 68 Թիւ տունը , Պալատու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ վաշի ըլլալով , մահլիւլէն ծախու հանուած , և աճուրդի դրուած ըլլալով մինչև ցարդ 7500 դրչի ելած է :

Ուստի կը ծանուցուի հասարակութեան թէ գինն աւելցնելով առնելու զողը պէտք է դիմել Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Թաղ . Խորհրդարանը կիրակի և ուրբաթ օրերը մինչև Հոկտ. 21 Ի կիրակի օրը , ուր վերջին գինը վերան մնացողին անպատճառ ծախուելով ստակը պիտի առնուի :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ի Վ Ա Ն Օ Է

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ Հատոր Գ.

Վօլթր Ս.քօթ անուանի վիպասանին երեք հատորէ բաղկացեալ այս նըշանաւոր գործը զոր Անգղիերէնէ թարգմանած է Մ. Մամուրեան էֆէնտի կը ծախուի ՚ի Տէտէեան տպարանի : Ինչպէս նաև Պօլիս ՚ի գրատուն Գալօթֆեան եղբարց : Խրաքանչիւր հատորին գինն է 12 դահեկան :

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

ՀՐԱՀԱՆԴԻՉ ԳՐԱԲԱՌ ԼԵՁԻՈՑ

Ի Պէտս վարժարանաց

ԱՐԱՐԵԱԼ ՆՇԱՆ Մ. ՇԻՇՄԱՆԵԱՆԷ

Գին 6 Ղուրուչ

Կը ծախուի եղբարց Գալօթֆեան գրատունը և ամեն Հայ գրավաճառաց թով :

ՊՐԱԺՕՆ ԴԵԿՈՄՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

Հատոր Գ.

Ա. Տիւմայի Երեք ՀՐԱՑԱՆԱԿԻՐՔ և քսան տարի ետքը վեպերը հրատարակելէն ետեւ հարկ էր նաև թարգմանել տալ և տպագրել յիշեալ վե-

պերը կերպով մը շարունակող գործն որ է Պրաժլոն Դերկոմո , անուանի վիպասանին մեծ վեպերէն մին , որ թէ պատմական նկարագիրներու , թէ հետաքրքրաշարժ անցքերու և թէ ճարտար հիւսուած քին կողմէ ընթերցողին ուշադրութիւնը կ'գրաւէ և միտքը կը կրթէ :

Պրաժլոն Դերկոմոն առաջին , երկրորդ և երրորդ հատորներն արդէն լոյս ընծայուած են :

Ամբողջ գործը 12 հատորէ պիտ բաղկանայ :

Բոլորին համար բանորդագրութեան գինն է 110 դահեկան ,

վեց հատորը տուպելէն ետեւ բաժանորդագրութեան գինն է 120 դահեկան իւրաքանչիւր հատորը 12 դահեկան Բաժանորդ գրուել ուզող կրնայ դիմել Կ. Պօլիս Յ. Գալօթֆեան եղբարց գրատունը , Չագմագճըլար Եօղուչու Թիւ 16 , Չիւսնիա Տէտէեանց գրատունը :

Ի Լ Ա Ն

Ինսանա արիզ օլան սըղը Ելէթի սօղուքտան հասըլ օլմագ իսէ տէ պուքէմիք իչինտէ ֆէնուզ պիր սարը սուտան իպարէթ օլուպ ֆագաթ պունուպազըլ վագթը կէշմիշ վէ լայըզըլա թէմէլ Թուլմուշ վէ պազըսը էթ իլէքէմիք արասընտա քալմըշ աղըլյա պաշգաճա մալիւճէ օլունմաք վէ հըֆսըյա Ալլահ թաալեա նուզուլ Ելէթինտէն վէ մէրագտան միւնազաւտան արիզ օլան ելլտէն պաշգա եալմըզ սօղուգտան հասըլ օլան սօգուղ օն սէնէլիք տախի օյսատա եինէ չարէսի պուլունմաք վէ էօքսիւրիկէ վէ կէօքիւս թըքանըկընա պէլ կէվէկլիլի վէ մագաթթա բէյտահ օլան սըղըլը մայասըլա մալիւճէ վէրմէք իւզրէ սարըլըքտա քէսրի մէշուր Ուստա Սիմօն պուլունուր Մահմուտ-Փաշա ճամիսինին ալլուսունտա օրթատաքի գահվէտէ իքթիզա էտէլէրին գահվէի մէզքիւրա կէլմէլէրի վէ իճապընա կէօրէ թարիֆ վէ էտվիէսինի պագմագ իչուն պունտան ագտէմ իլան էթմիշ իսէ տէ մէզքիւր Ելէթլէրին իլավէսի իչիւն պուքէրէ եինէ իլան իտէր :

Վէ սըղը Ելէթի 24 սաաթտա տըշարը չըգարըլըմ վէ գասըգ Ելէթինին իճրասընտա պուլունուրըլ :

Քառնընտա պասուր օլան պիլ սանճը վէրիլ իսէ օնունտա իճրասընտա պուլունուրըլ :

ՏԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԹԱՆԱՏՈՒ ՕԳՍԷՆ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆԻ Օ . ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԵՈՒՍՈՒՑԵԱՆ ԽԱՆ ՎԵՐԻ ՅԱՐԿ ԹԻԻ 7